ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2026



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



- Ողջույնի խոսք
- ԱՄԿ նախաձեռնությունը նպաստում է Հայաստանում զբաղվածության ֆորմալացմանը
- Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միությունը նշել է Ուսուցչի և Գրադարանավարի օրերը
- «Արմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար
- ՀԱՄԿ նախագահ Էլեն Մանասերյան.«Մենք չենք կարող ունենալ արժանապատիվ աշխատանք մեռած մոլորակի վրա»
- Կայուն գյուղատնտեսությունը սկսվում է նաև աշխատողների առողջության և իրավունքների պաշտպանությունից
- Ի՞նչ ենք ուտում և ի՞նչ թունաքիմիկատներ են ներմուծվում ՀՀ
- Ջերմուկում անցկացվել է հանքարդյունաբերության, մետալուրգիայի և ոսկերչության ոլորտների արհմիությունների կարողությունների զարգացման սեմինար
- Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը կազմակերպել է «Կլոր սեղան» քննարկում
- Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը կազմակերպել է «Արհմիության կարողությունների ու հմտությունների զարգացման» թեմայով սեմինար



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը: Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ԱՄԿ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՖՈՐՄԱԼԱՑՄԱՆԸ



https://www.ilo.org/resource/news/ilo-initiative-advances-formalization-armenia





«ԱՐՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐ

Հոկտեմբերի 17-18-ը Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) և Հայաստանում Համերաշխության կենտրոնի համագործակցությամբ անցկացվել է «Արհմիության անդամակցության բարձրացման շարժառիթները» թեմայով սեմինար:



ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵԼ Է ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ՕՐԵՐԸ



Տեղեկույթ

2026թ. հոկտեմբերի 9-ին՝ ժամը 14:00-ին, Մշակույթի աշխատողների Ճյուղային հանրապետական միությունը ՀԱՄԿ-ի նիստերի դահլիճում հերթական անգամ նշեց ‹‹Ուսո...

hamk.am

https://hamk.am/tekhekuyt-3

ՀԱՄԿ ՆԱԽԱԳԱՀ ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ.

«ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՈՒՆԵՆԱԼ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՄԵՌԱԾ ՄՈԼՈՐԱԿԻ ՎՐԱ»



ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի (COP17) շրջանակում կայացել է «Բարձր մակարդակի երկխոսություն Հայաստանում մարդկանց և կենսաբազմազանության համար արդար անցման վերաբերյալ» խորագրով պանելային քննարկումը, որին մասնակցել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանը:

Քննարկման առանցքում եղել են բնապահպանական կայունության, տնտեսական զարգացման, աշխատողների իրավունքների և սոցիալական արդարության փոխկապակցվածությունը, ինչպես նաև արդար անցման գործընթացում սոցիալական գործընկերության դերը:

Իր ելույթում ՀԱՄԿ նախագահ Էլեն Մանասերյանն ընդգծել է, որ արդար անցման հաջողության համար անհրաժեշտ է սոցիալական երկխոսությունը վերածել իրական և արդյունավետ մեխանիզմի՝ հատկապես սկզբնական՝ կազմակերպությունների մակարդակում:

«Առաջին հերթին մենք պետք է սոցիալական երկխոսությունը դարձնենք իրականություն, հատկապես՝ սկզբնական օղակի կազմակերպություններում: Ուրախ եմ արձանագրել, որ այս տարի կառավարության մակարդակում մենք հաջողության ենք հասել, թեև արհմիությունները լիովին գոհ չեն Եռակողմ հանձնաժողովի աշխատանքներից: Այնուամենայնիվ, այս փորձը կարող է օրինակ ծառայել ճյուղային սոցիալական երկխոսության համար», — նշել է Էլեն Մանասերյանը:

Անդրադառնալով Հայաստանի տնտեսական և բնապահպանական մարտահրավերներին՝ ՀԱՄԿ նախագահը շեշտել է, որ երկրի տնտեսության՝ հանքարդյունաբերությունից կախվածությունը և գյուղատնտեսական արտադրանքում թունաքիմիկատների օգտագործման կանոնների խախտումների վերաբերյալ վերջին զեկույցները վկայում են բնապահպանական և սոցիալ-տնտեսական հարցերը միասնական մոտեցմամբ դիտարկելու անհրաժեշտության մասին:

«Կա մի պարզ ճշմարտություն. մենք չենք կարող ունենալ արժանապատիվ աշխատանք մեռած մոլորակի վրա: Եվ չպետք է խոսենք կենսաբազմազանության մասին՝ այն դիտարկելով այլ խնդիրներից մեկուսացված», — ընդգծել է նա:

Էլեն Մանասերյանի խոսքով՝ սոցիալական երկխոսությունը պետք է ծառայի Հայաստանի եզակի էկոհամակարգերի պահպանությանը՝ միաժամանակ երաշխավորելով աշխատողների անվտանգությունն ու ապրուստի կայուն միջոցները: Դրա համար անհրաժեշտ է, որ կառավարության և ոլորտների միջև երկխոսության հարթակները լինեն թափանցիկ և արդյունավետ, իսկ դրանց աշխատանքներին լիարժեք մասնակցություն ունենան նաև արհմիությունները:



ՀԱՄԿ նախագահը կարևորել է նաև աշխատողների դերը բնապահպանական անվտանգության ապահովման գործում՝ նշելով, որ աշխատավայրերում գործող մարդիկ հաճախ առաջինն են նկատում բնապահպանական և անվտանգության կանոնների խախտումները: Սակայն նրանք պետք է վստահ լինեն, որ նման խնդիրների բարձրաձայնումը չի հանգեցնի իրենց աշխատանքը կորցնելուն:

«Աշխատողները պետք է վստահ լինեն, որ խնդիրների մասին բարձրաձայնելու պատճառով չեն զրկվի աշխատանքից: Եռակողմ սոցիալական երկխոսությունը պետք է կամուրջ դառնա բնապահպանական օրենսդրության և իրականության միջև առկա անջրպետը հաղթահարելու համար», — նշել է Էլեն Մանասերյանը:

Անդրադառնալով աշխատողների առողջության և անվտանգության հարցերին՝ ՀԱՄԿ նախագահը կարևորել է կենսաբազմազանության պահպանության և աշխատանքի անվտանգության փոխկապակցվածության շուրջ երկխոսության ընդլայնումը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կարևորում է արդար անցման գործընթացում աշխատողների շահերի պաշտպանությունը, սոցիալական գործընկերության ամրապնդումը և արհմիությունների լիարժեք մասնակցությունը որոշումների կայացմանը: Արդար անցումը պետք է ապահովի ոչ միայն բնապահպանական նպատակների իրագործումը, այլև արժանապատիվ աշխատանքը, աշխատողների առողջության ու անվտանգության պաշտպանությունը և սոցիալական երաշխիքների պահպանումը՝ փոփոխությունների բոլոր փուլերում:



ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոկտեմբերի 20-ին՝ COP17-ի շրջանակում, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախաձեռնությամբ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված թունաքիմիկատներից առաջացող ընդհանուր ռիսկի նվազեցման գործում արհմիությունների ռազմավարական դերին՝ Կունմին-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակի 7-րդ նպատակին համահունչ:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին «Կայուն գյուղատնտեսություն և աշխատողների պաշտպանություն. թունաքիմիկատների արդյունավետ կառավարումը և խելամիտ կիրառությունը գյուղատնտեսությունում» արհմիութենական դիրքորոշման փաստաթղթի հիմքում ընկած ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրությունն իրականացվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի ներկայացուցչության և ՅՈՒՍՏՈՒՍ հետազոտական խորհրդատվական հիմնադրամի համագործակցությամբ:

Ելույթներով հանդես եկան Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ծրագրերի ղեկավար Լիանա Բադալյանը և ՅՈՒՍՏՈՒՍ հիմնադրամի ներկայացուցիչ, դոկտոր Էմիլ Գևորգյանը:

Քննարկվեցին թունաքիմիկատների կիրառման հետ կապված մարտահրավերները, աշխատողների անվտանգության ու առողջության պաշտպանության ուղիները, ինչպես նաև գյուղատնտեսական ու բնապահպանական քաղաքականության մշակման գործընթացներում արհմիությունների մասնակցության հնարավորությունները:

Ուսումնասիրության արդյունքները ահազանգում են պեստիցիդների կիրառման չարաշահումների և արդեն իսկ գոյություն ունեցող ռիսկերի մասին:

Ուսումնասիրությանը ծանոթանալու համար՝ **https://hamk.am/uploads/files/pesticide_management.pdf**



Ի՞ՆՉ ԵՆՔ ՈՒՏՈՒՄ ԵՎ Ի՞ՆՉ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐ ԵՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՒՄ ՀՀ



https://www.youtube.com/watch?v=7AahgLpcxBs

ԱՃԵԼ ԵՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ







https://www.youtube.com/watch?v=gqkn5z5zrgw

ՋԵՐՄՈՒԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԵՎ ՈՍԿԵՐՉՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ



Ջերմուկում անցկացվել է հանքարդյունաբերության, մետալուրգիայի և ոսկերչության ոլորտների արհմիությունների կարողությունների...

2026 թվականի հոկտեմբերի 23–25-ը Ջերմուկում անցկացվել է հանքարդյունաբերության, մետալուրգիայի և ոսկերչության ոլորտների արհմիությունների կարողությունների զարգացման եռօրյա սեմինար։

lermet.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ» ՔՆՆԱՐԿՈՒՄ





2026 թվականի հոկտեմբերի 28-ին «Փարիզ» հյուրանոցում Հայաստանի բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների ճյուղային հանրապետական միությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ֆինանսական աջակցությամբ, կազմակերպեց «Կլոր սեղան» քննարկում՝ աշխատանքային հարաբերություններին վերաբերող արդիական թեմաներով։

Քննարկման առանցքում էին աշխատանքային պայմանագրերը, համաձայնագրերը, անձնական տվյալների պաշտպանությունը և աշխատողների իրավունքներին առնչվող այլ կարևոր հարցեր։

Ճյուղային հանրապետական միության իրավերով հանդիպմանը մասնակցում էին ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչներ Վազգեն Մուրադյանն ու Մարինե Մկրտչյանը, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և բարեկեցության նախարարության ներկայացուցիչ Արփինե Սարգսյանը։

Հյուրերի մասնագիտական պարզաբանումների շնորհիվ քննարկումն անցավ ակտիվ և կառուցողական մթնոլորտում։ Մասնակիցները հնարավորություն ունեցան անկաշկանդ բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը և ստանալու սպառիչ ու մասնագիտական պատասխաններ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է «ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐ

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը Եվրոպական հանրային ծառայությունների արհմիության (European Public Service Unions (EPSU)-ի աջակցությամբ կազմակերպեց որոշ անդամ կազմակերպությունների ակտիվի համար «Արհմիության կարողությունների ու հմտությունների զարգացման» թեմայով սեմինար:

EPSU-ի օրգանայզինգի փորձագետ Արտեմ Տիդվայի օգնությամբ Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության մասնակիցները սովորեցին, թե ինչ գործողություններ պետք է կազմակերպեն արհմիությունները հաջողության հասնելու, անդամներ ներգրավելու և ազդեցիկ լինելու համար: Այդ թվում՝ տեսական գիտելիքների ու գործնական առաջադրանքների միջոցով պետական ու համայնքային գերատեսչությունների արհմիությունների ներկայացուցիչները սովորեցին մշակել ընդլայնման ռազմավարություն, «ըստ էության» զրույցներով և կոլեկտիվ խնդիրների լուծմամբ ամրապնդել կապերն անդամների միջև, ճիշտ ընտրել շահագրգիռ կողմերին և ուրվագծել արդյունավետ քարոզարշավներ:

Երկօրյա սեմինարն անցավ փորձի ակտիվ փոխանակման և բուռն քննարկումների մթնոլորտում:









Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am